975 Դու կյանք ես, Հիսո՛ւս, Դու լույս ես, Հիսո՛ւս,

1. Դու կյանք ես, Հիսո՛ւս, Դու լույս ես, Հիսո՛ւս,
Դու հույս ես, ի՛մ Տեր, ի՛մ Հիսուս:
Հավատք ես, սուրբ ես,
Բարի ես, ի՛մ Տեր,
Օգնի՛ր, որ փառաբանեմ Քեզ:

2. Դու՝ կյանքի աղբյուր, սառած սրտիս՝ հուր,
Փակված դուռ բացող ի՛մ Հիսուս:
Դու՝ բժիշկ վերքիս,
Թելադրող երգիս,
Հիմք և հավատք ես, ի՛մ Հիսուս:

3. Դառն էր տանջանքդ, սեր էր նայվածքը
Թախանձող դեմքիդ, ի՛մ Հիսուս:
Մոտեցողին՝ սեր,
Դու խոնարհ ի՛մ Տեր,
Տանջանքս կրող իմ Հիսուս:

4. Փառք Քո սուրբ անվան, փառք Քո սուրբ արյան,
Փառքի ես արժան, ի՛մ Հիսուս:
Փառավորեցիր Հոր
Կամքն անձիդ մեջ,
Փառք քեզ հարաժամ, հավիտյան: